

Վ. Դավթյանը ներկա է եղել Սյունիքի մարզային գրադարանի նախաձեռնած մայիսյան հաղթանակներին նվիրված գրական-երաժշտական ցերեկույթին 06.05.2015թ.

Մայիսի 6-ին Սյունիքի մարզային գրադարանի նախաձեռնությամբ տեղի ունեցավ Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի 70-ամյակի և արցախյան պատերազմի հաղթանակներին նվիրված գրական- երաժշտական ցերեկույթ:

Միջոցառմանը մասնակցում էին ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանը, խորհրդական Վոլոդյա Հովհաննիսյանը, մարզպետարանի աշխատակազմի մշակույթի և սպորտի բաժնի պետ Սարգիս Դավթյանը:

Ցերեկույթին հրավիրվել էին նաև Հայրենական մեծ պատերազմի մասնակիցներ ու թիկունքի վետերաններ, ովքեր կիսվեցին իրենց ռազմաճակատային հուշերով:

Մարզպետի խորհրդական, գնդապետ Վ. Հովհաննիսյանը կարևորելով նմանատիպ միջոցառումների դերը մատաղ սերնդի դաստիարակության համար, նշեց, որ մատաղ սերունդը պետք է իմանա իր պապերի սխրանքների մասին ու դաստիարակվի հայրենասիրական ոգով:

Միջոցառման ավարտին Վ. Դավթյանը շնորհավորելով բոլոր վետերաններին՝ մաղթեց նրանց առողջություն, երկար և բարեկեցիկ կյանք, ինչպես նաև երախտիքի ու բարեմաղթանքի խոսքեր հղեց պատերազմի բոլոր մասնակիցներին:



